

Մերի Սաֆարյան

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն

mersaf87@mail.ru

ԱՂՅՔԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԹԱՂՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր՝ Աղցքի արքայական դամբարան, քարե սնդուկ-մասունքատուփեր, վաղ միջնադարյան արձանագիր տապանաքարեր, գերեզմանոց, միջնադարյան թաղումներ, թաղման գույք

ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք համայնքում գտնվող հայոց արքաների դամբարան հուշահամալիրում 2015 թ. սկսվեցին պարբերական պեղումներ (ղեկ. Հակոբ Միմոնյան): Հուշարձանը հայտնի է դեռևս 4–5 դդ. գրավոր աղբյուրներում: Պատմահայր Մովսես Խորենացու ու Փավստոս Բուզանդի հաղորդմամբ Աղցքը եղել է ամրացված ավան, որտեղ կառուցել են դամբարան ու վերաթաղել Անի-Կամախ ամրոցի դամբարաններից պարսիկների հափշտակած ու սպարապետ Վասակ Մամիկոնյանի կողմից վերադարձված հայոց արքաների ոսկորները (Խորենացի 1991, 288–289; Բուզանդ 1833, գլ. Դ, իդ):

Պատմիչների վկայությունները հաստատվեցին 2016 թ. պեղումների արդյունքներով, երբ եկեղեցու խորանի առջև՝ հին սալահատակի ներքո բացվեցին, մարդկանց բեկոտված մասունքներով լի, տուֆե երեք աճյունասանդուկ (նկ. 1)¹՝ սեղմ փակված կափարիչներով (Միմոնյան և ուրիշներ 2017, 241): Դրանք պատրաստված են սև ու կարմիր տուֆից և իրենց տեսքով ու որակական հատկանիշներով նման են եկեղեցու և դամբարանի շինարարության մեջ օգտագործված շինանյութին:

Մասունքատուփերից մեկը նման է սնդուկի, որի կափարիչն ունի հավասարասրուն եռանկյան տեսք և ավելի լավ է մշակված, քան տուֆի մակերեսը: Քարե այս սնդուկի արևելյան կողմում, կափարիչի և տուֆի վրա փորագրված խաչ է: Այն, հավանաբար, նշան է, որով, ըստ քրիստոնեական ծեսի, կնքել են գերեզմանը (Միմոնյան և ուրիշներ 2017–2018, 28): Աշոտ Փիլիպոսյանի բանավոր հաղորդմամբ նման քարարկղ-օտուարիներ (осыарий) կիրառվել են դեռևս հելլենիստական ժամանակներից, որոնք ըստ Պավել Ավետիսյանի օգտագործվել են մինչև մ. թ. 4-րդ դար (Միմոնյան 2017, 12): Առկա խաչ-կնիքը վկայում է, որ վերաթաղումները կատարվել են քրիստոնեության ընդունումից հետո:

Մյուս մասունքատուֆի և եկեղեցու վրա դրված սալահատակների մակարդակները տարբեր էին: Տպավորությունն այնպիսին էր, որ քանդել էին հին սալահատակը, տեղադրել սնդուկը, ապա սեպաձև վերաշարել քարերը (Միմոնյան և ուրիշներ 2017–2018, 28): Ընդ որում այս շարի քարերից մեկի վրա պահպանվել է

արմնկանձն փորվածք: Ամենայն հավանականությամբ գործ ունենք քարի՝ երկրորդական կիրառության հետ:

Քարե սնդուկների մեջ գատորոշվեցին մարդկային խողովականձն ոսկորներ, կրծոսկրի, սրբոսկրի կտորներ, գանգի, թիակի, կոնքոսկրի մանր շերտացված բեկորներ, կողոսկրեր ու տարբեր ողեր (բնորոշումները՝ Հասմիկ Միմոնյանի): Դրանցից առաջինի մեջ գտնվեցին նաև ատամներ, որոնց մի մասը պատկանել են երիտասարդ կնոջ (Միմոնյան և ուրիշներ 2017–2018, 28): Որոշ ոսկորների վրա նկատելի են այրվածքի հետքեր, ինչը վկայում է, որ այստեղ վերաթաղվել են նաև հնավանդ ծեսով դիակիզված մասունքներ (Միմոնյան 2005, 57–66): Առկա էին նաև երեխաների ոսկորների մնացորդներ:

Փաստորեն դրանց մեջ դրվել էին ոչ ամբողջական, փափուկ հյուսվածքներից գուրկ, բեկոտված, սեռատարիքային տարբեր խմբերի պատկանող անհատների կմախքների խառը մնացորդներ:

Պեղումների արդյունքում, գերեզմանոցի տարածքում բացվել են բազմաթիվ սալարկղային և քարարկղային թաղումներ, որոնցից պեղվել է չորսը: Դրանցից երկուսը գտնվում են բազիլիկ եկեղեցում, մեկը՝ կենտրոնական նավի հարավ-կենտրոնական մասում, իսկ մյուսը՝ հարավային նավի կենտրոնական մասում:

Եկեղեցու հյուսիսային նավի արևելյան մասում, դեռևս 2001թ. պեղումների արդյունքում, բացվել էր քարակերտ հսկա սարկոֆագ, որտեղ, ըստ մարդաբան Ռուզան Մկրտչյանի, ամփոփված է եղել 25 տարեկան երիտասարդի՝ քրիստոնեական ծեսով կատարված թաղում (Միմոնյան 2011, 33):

Ինչպես սրկոֆագի, այնպես էլ քարարկղային թաղումների առկայությունը եկեղեցու ներսում՝ սալահատակի տակ, անչափ ուշագրավ են: Քանի որ եկեղեցին արգելում է աղոթասրահում թաղումներ կատարելը, ուստի վերոհիշյալ անհատները պետք է նշանավոր անձիք կամ նահատակներ լինեն (Միմոնյան 2011, 33), իսկ թաղումներն, ամենայն հավանականությամբ, կատարվել են մինչև Աշտիշատի ժողովում եկեղեցական կանոնակարգերի մշակումը:

Վերջին տարիներին Աղցքում կատարված պեղումների կարևորագույն գյուտերից էր անխախտ դիրքով պահպանված տապանաքարերով վաղ միջնադարյան գերեզմանոցի բացահայտումը (նկ. 2): Մինչ օրս փաստվել է անխախտ դիրքով 17 տապանաքար, որոնց մեծ մասը թվագրվում են վաղ միջնադարով՝ 5–7-րդ դդ. (Միմոնյան և ուրիշներ 2019, 11): Դրանք կերտված են սև ու կարմիր տուֆից, ունեն հիմնականում ուղղանկյուն և երկաստիճան ցածր պատվանդաններ ու երկլանջ, լայն փոված գագաթ: Շիրմաքարերից մի քանիսն արձանագիր են, սակայն հիմնականում հողմահարված են և դժվար ընթեռնելի: Դրանցից երկուսը սկսվում են «ԱՅՍ ԴԻՐ» գրությամբ: Նման արձանագրություն ունեցող տապանաքարերից մեկը (9) սկսվում է սեպան թևիկներ ունեցող խաչաքանդակով: Գրության մյուս կեսը հողմահարված է (Միմոնյան և ուրիշներ 2019, 11):

Ուշագրավ է նաև արևմտյան հատվածի երկու նիստերին, սեպան նախազգուտիներով ձևավորված շրջան-մեղալիոնի մեջ ներառված, վաղ միջնադարին բնորոշ հավասարաթև խաչաքանդակներով տապանաքարը (15): Արևելյան եզրին հաված է սկավառականձն մշակված տուֆե գլխաքար: Նման, այսպես կոչված «հունական»

խաչապատկերներ հայտնի են վաղ միջնադարյան մի շարք եկեղեցիների պատերի և քառանիստ կոթողների քանդակներից (Աղցք, Փարպի, Երերույք, Ծիծեռնավանք, Չիչխանավանք և այլն): Երերույքում, վերջին տարիներին իրականացված պեղումների արդյունքում, բազիլիկ եկեղեցու հարավ-արևելյան անկյունում փաստված ամենամեծ տապանաքարի արևմտյան ճակտոնին ևս քանդակված է խաչ: Վերջինս, սակայն, ավելի շատ նման է «լատինական» խաչին՝ փոքր-ինչ երկարավուն է, քան «հունականին» (Տոնապետյան 2020, 143, նկ. 80): Շրջանի մեջ առնված հավասարաթև խաչի պատկեր հանդիպում ենք նաև Չիչխանավանքի միջնադարյան գերեզմանոցում, բայց ոչ թե տապանաքարի վրա, այլ գլխաքարի: Խաչակիր գլխաքարն իրենից ներկայացնում է վերին մասում կիսաշրջանաձև ավարտվող կարմրավուն տուֆից ուղղանկյուն սալ՝ խաչը դեպի արևմուտք (Նալբանդյան և ուրիշներ 2015, 36, նկ. 7): Նմանատիպ թաղում հայտնի է նաև Թալինից և Շիրակից:

Նորաբաց տապանաքարերից մեկի վրա (18) առկա է ընդարձակ, գրեթե անաղարտ վիճակում մեզ հասած արձանագրություն: Այն երկուական տողով զբաղեցնում է քարի երկու թեք նիստերը և ունի վաղմիջնադարյան վիմագրերին հատուկ փորագրություն՝ կատարված ուղիղ հարթեցմամբ: Տառերը բոլորձև երկաթագիր են՝ նման Էջմիածնից, Թալինից, Չիչխանավանքից, Դվինից և այլ հնավայրերից հայտնի վաղմիջնադարյան տապանագրերին (Սիմոնյան և ուրիշներ 2019, 15, նկ. 8): Պատկանում է Ստեփանոս Աղցից վանականին, ով երիտասարդ հասակում, սրով խողխողվելով, վախճանվել է: Ստեփանոս վանականի տապանագրի գյուտի մեկ այլ կարևորությունն այն է, որ վերջինս ճշգրտում է ավանի անվանումը՝ Աղց ձևով: Այն իրավանք կարող է համարվել տեղանվան վաղագույն հիշատակությունը, որի հիմամբ հաստատվում է նաև Խորենացու հավաստիությունը (Սիմոնյան և ուրիշներ 2019, 20):

Վաղ միջնադարի այս արձանագիր տապանաքարերն, ամենայն հավանականությամբ, թվագրվում են 5–7-րդ դդ.: Դրանց ներքո, թերևս, ննջում են հայ իշխաններ կամ բարձրաստիճան հոգևորականներ, ովքեր իրենց արժանի հետք են թողել մեր պատմության մեջ (Սիմոնյան 2017, 12):

Հնավայրի կենտրոնական հատվածում, բացվեց միջնադարյան գերեզմանոցը: Այստեղ առայժմ պեղել ենք զարգացած և ուշ միջնադարի շուրջ 249 մարդու թաղում, որոնցից բնորոշվել է 178-ը (տորածին՝ 18, երեխա՝ 56, իգական սեռի՝ 45, արական սեռի՝ 43, անորոշ՝ 16): Վերջիններս թաղվել էին քրիստոնեական ծեսով՝ մեջքի վրա պառկած, հիմնականում դեմքով դեպի արևելք, ձգված իրանով, ձեռքերը կրծքի կամ որովայնի շրջանում խաչված, ոտքերը գուգահեռ դրված (նկ. 2): Նույն պատկերին ակնատես ենք լինում նաև Երերույքի գերեզմանոցում (Տոնապետյան 2020, 130): Կմախքները գտնվում էին գետնի մակերեսից 30–100 սմ խորությամբ, 3–4 հորիզոններում միմյանց վրա շատ խիտ դասավորված, շատ դեպքերում ուղղակի իրար վրա, և վերաբերում են զարգացած միջնադարից մինչև ուշ միջնադարին: Թաղումների այսպիսի խտություն փաստվել է նաև Չիչխանավանքում (Նալբանդյան և ուրիշներ 2015, 33):

Առաքել Դավրիժեցու վկայությամբ 1605–1606 թթ. պարսից Շահ Աբասն իր գաղթի հրամանով «միանգամից անմարդաբնակ դարձրեց ամեն ինչով լի ու հուռ-

թի աշխարհս Հայոց, որովհետև տարագրելիս ոչ թե մեկ կամ երկու գավառ քննեց Պարսկաստան, այլ շատ գավառներ» (Դավրիժեցի 1988, 52–53): Դրանց թվում էր «բովանդակ Արարատյան դաշտը»: Թերևս, Շահ Աբասի կազմակերպած արտագաղթից հետո, գյուղի գերեզմանոցը՝ տապանաքարերով և խաչքարերով, դադարել է գործելուց: Դրանից հետո Աղցքի պատմությունն, ասես, ընդհատվում է ավելի քան երկու դարով: Հայերի գաղթից հետո Աղցքում հաստատվում են մահմեդականներ, որոնք շարդում են բազմաթից խաչքարեր: Եվ արդեն 1840 թ. Աղցք այցելած առաջին հետազոտող Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցը վկայում է, որ այստեղ՝ պատվանդանների վրա, եղել է ընդամենը մի քանի կանգուն խաչարձան (Շահխաթունյանց 2014, 249–251):

Առանձին թաղումներ բացվեցին նաև եկեղեցուց հյուսիս, պեղավայրի արևմտյան հատվածում և հարավային եզրին գտնվող կոթողային կառույցի ներսում:

Գրեթե բոլոր թաղումները կատարված էին քրիստոնեկան ծեսով: Բացառություն էին կազմում միայն 3՝ երկու երեխայի և մեկ պարմանուհու (թիվ 156, 172, 177), որոնց թաղումները կատարվել էին նույն ծեսով, բայց աճյունները դրված էին հակառակ՝ գլուխներն արևելք: Ուշագրավ է, որ երեխաները պատկանել են 1–2 և 2–3 տարեկան տարիքային խմբին, իսկ իգական սեռի ներկայացուցիչը՝ 15–17: Տեղերի վանական համալիրի գավթում կա մարդակերպ փոքր տապանաքար (13-րդ դար): Ի տարբերություն մյուս տապանաքարերի վերջինս հակառակ է դրված՝ գլխով ուղղված դեպի արևելք: Քարի վրա առկա է երկտող արձանագրություն՝ [ՍՈՒՆՆՆՆ ՈՐԴԻ .../...] (Կարապետյան 2013, էջ 30):

Կարելի է ենթադրել, որ այս անհատները կամ մահացել են առանց մկրտություն ստանալու, կամ եղել են այլ դավանանքի հետևորդ: Ուստի մահից հետո ինչ որ կերպ տարբերակելու համար կիրառվել է թաղման նմանատիպ ծես:

Անհատականներից գատ փաստվել են նաև խմբակային համաժամանակյա և մի քանի անսվա տարբերությամբ կատարված թաղումներ:

Համաժամանակյա խմբակային կամ, պայմանականորեն «ընտանեկան» կոչվող թաղումը բացվեց եկեղեցուց մի փոքր հարավ՝ դամբարանի մուտքի դիմաց (նկ. 3): Տարբեր տարիքի ու սեռի վեց անձանց՝ այդ թվում նաև երեխաների պատկանող կմախքների այդ խումբը առանձնացված էր շերտի մյուս թաղումներից և դրված էր կավալիցքի վրա: Դրանց դասավորվածությունը խոսում է միևնույն ժամանակ կատարված հուղարկավորության մասին: Հետաքրքրական է, որ Չիչխանավանքի գերեզմանոցում ևս անհատական թաղումներից գատ հայտնաբերվել են նաև խմբակային թաղումներ: Միևնույն քարարկղի մեջ գտնվել են 2–3, մի դեպքում էլ՝ 5 զանգ պարունակող թաղումներ (Նալբանդյան և ուրիշներ 2015, 33):

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում գերեզմանոցի տարբեր հատվածներում ու գրեթե նույն մակարդակի վրա պեղված՝ հղիության վերջին ամիսներում գտնվող կանանց աճյունները:

Նրանցից առաջինը գտնվում էր գերեզմանոցի հյուսիսային մասում՝ վերոհիշյալ «ընտանեկան» թաղումից մի փոքր հարավ: Այստեղ ևս խմբակային թաղում էր (թիվ 132, 133), որը բաղկացած էր հղի կնոջ ու 1.5 տարեկան երեխայի կմախքներից (նկ. 4): Իգական սեռի անհատը դիտարկված էր մեջքի վրա: Ձեռքերը դասա-

վորված էին որովայնի շրջանում: Կոնքի հատվածում առկա էին դեռ չծնված երեխայի ոսկրեր՝ գանգով ուղղված դեպի մոր ցայքոսկրը: Ըստ մարդաբան Հասմիկ Սիմոնյանի, կինը եղել է 25–30 տարեկան և մահացել հղիության վերջին շաբաթներում: Չծնված երեխայի ոսկրներն ամբողջությամբ պահպանվել են: Կնոջ աջ կողմում դրված էր 1.5 տարեկան երեխայի կիսաքայքայված կմախքը:

Երկրորդը գտնվում էր գերեզմանոցի արևմտյան կողմում: Եվս դիտարկված էր մեջքի վրա (թիվ 173): Ձեռքերը 95՝ անկյան տակ դրված էին գոտկատեղի ու կոնքոսկրի շրջանում: Կինը պատկանել է 25–35 տարեկան տարիքային խմբին: Կմախքի ձախ կոնքոսկրի վրա առկա էին պտղի ոսկրներ՝ գանգով ուղղված դեպի ներքև: Մոր մահվան պահին սաղմը եղել է 6–7 ամսական:

Թաղումների մեջ փաստվել են նորածին երեխաներից մինչև վաթսունն անց անհատների կմախքներ: Մեծաթիվ են մինչև 10–12 տարեկան երեխաների թաղումները, ինչը խոսում է տվյալ ժամանակաշրջանում մանուկների մահացության բարձր ցուցանիշի մասին (նկ. 5): Հարկ է նշել, որ Երեքույքի գերեզմանոցի՝ ուսումնասիրված հատվածում առանձնացված է մի փոքր տարածք, որը գտնվում է բազիլիկից հարավ-արևելք: Այստեղ 11-րդ դարից սկսած կատարվել են հիմնականում փոքր և ծծկեր երեխաների թաղումներ: Այս երևույթը, ըստ հետազոտողների, ոչ թե վրա հասած աղետի հետևանք է, այլ սուրբ Հովհաննես Մկրտչին՝ Կարապետին և Ստեփանոս Նախավկային նվիրված «վկայարանի» նորոգման և անվանակոչության վերականգնման արդյունք՝ ինչը յուրատեսակ թոյլտվություն է դարձել Երեքույքի գերեզմանոցում՝ ավագ խորանի հարևանությամբ, հողին հանձնելու ծծկեր տարիքի մահացած երեխաներին, որոնց դեռ չէին հասցրել մկրտել (Տոնապետյան 2020, 137–139): Աղցքի բուն գերեզմանոցում մանկական թաղումները որևէ կենտրոնացում չունեին, կատարված էին մեծ խնամքով և աչքի էին ընկնում ուղեկցող նյութով:

Աճյունների մարդաբանական նախնական ուսումնասիրությունը հետաքրքիր տեղեկություններ ի հայտ բերեց հանգուցյալների սեռատարիքային կազմի, մահվան հանգամանքների, ունեցած հիվանդությունների և այլնի վերաբերյալ: Որոշ կմախքների վրա դիտվում են այնպիսի վնասվածքներ, որոնք կարող են խոշտանգումների կամ բռնի մահվան վկայություն լինել: Որոշ կմախքների վրա, հատկապես մեծահասակների մոտ, փաստվել են տարիքային հիվանդություններ՝ ատամնաթափություն, կարիես, ոսկրերի գերաճ: Վերջինս հանդիսանում է ինչպես տարիքային փոփոխության հետևանք, այնպես էլ վնասվածքի: Արձանագրվել են նաև գենետիկ շեղումներ: Մասնավորապես, 5 տարեկան մի երեխայի (թիվ 159) մոտ արձանագրվեց ռախիտ մանկական հիվանդությունը: Մեկ այլ անհատի մոտ առկա էր մետոպիզմ՝ ճակատոսկրի բաց կարի երևույթ: Մովորաբար այն փակվում է մինչև 3 տարեկանը: Այստեղ պահպանվել էր միայն գանգը՝ վերին 3 ողերով, որը պատկանում է 25–30 տարեկան տղամարդու (թիվ 217):

Միջնադարյան ավանի գերեզմանոցում պեղված բոլոր թաղումները համարակալվել, լուսանկարվել են, մանրամասն նկարագրվել ու չափագրվել են (մարդաբան՝ Հասմիկ Սիմոնյան, ճարտարապետ՝ Նանար Քալանթարյան): Ամբողջ

Նյութն այժմ գտնվում է ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի» էթնոգենոմիկայի լաբորատորիայում (վարիչ Լևոն Եպիսկոպոսյան):

Թաղումների հետ դրված գույքը

Աղցեցիների սոցիալ-տնտեսական պայմանների մասին պատկերացում կազմելու համար մեզ օգնության է գալիս նաև թաղման գույքը: Որոշ կմախքների վրա առկա էին արծաթից ու բրոնզից զարդեր, դրամ, սարդիոնից ու սպալուց պատրաստված ինչպես առանձին ուլունքներ, կնիք, այնպես էլ ամբողջական ուլունքաշար (հնագիտական նյութի մաքրման և ամրակայման աշխատանքներն իրականացրել են Ելենա Աթոյանցը և Մերի Սաֆարյանը):

Կմախքներից մեկի (թիվ 85) ձախ ազդրոսկրի մոտից գտնվեց արծաթից ամբողջական դրամ (աղ. 1, նկ. 1): Ըստ դրամագետ Արմինե Ջոհրաբյանի այն Ջելախրյան դիրհեմ է և թվագրվում է 15-րդ դարով:

Արծաթից՝ բոլորածն հիմքով ու թիթեռնիկաձև գագաթով և բրոնզից՝ օվալաձև գագաթով մատանիներ կային 50-ն անց կնոջ (թիվ 94) ձախ ձեռքնաթաթի ֆալանգների վրա: Արծաթից մատանու գագաթի թիթեռնիկաձև մակերեսին պահպանվել էր կտորից գործվածքի մնացորդ (աղ. 1, նկ. 2):

Գործվածքի մնացորդ փաստվեց 15–17 տարեկան աղջնակի (թիվ 229) գանգի աջ կողմին հաված բրոնզից ականջօղի վրա (աղ. 1, նկ. 3): Այն բոլորածն հիմքով ու ներքևում գնդաձև զարդ ունեցող, երկու օղով իրար ագուցված ականջօղ է: Նույն կմախքի աջ ձեռնաթաթի ֆալանգներից մեկի վրայի բրոնզե մատանու վրա նույնպես նկատվում է կտորի հետք:

Մանկական որոշ թաղումներից (թիվ 112, 139) գտնված բրոնզե ապարանջանների մակերեսներին ևս գործվածքի մնացորդներ կային (աղ. 1, նկ. 4, 5):

Մանկական թաղումներից առավել աչքի էր ընկնում 112-ը: Այն պատկանում է 4–5 տարեկան աղջնակի: Պարանոցին առկա էր առնվազն 3 պտույտով փաթաթված ուլունքաշար: Շարը բաղկացած է տարբեր չափերի՝ հիմնականում մանրաուլունք (ծեքեր), սպալուց պատրաստված բազմաձև ու բազմագույն ուլունքներից (մոտ 500 հատ) (աղ. 1, նկ. 6–8):

Մյուս արժեքավոր գտածոն թաղումների երրորդ շերտի՝ 127 կմախքի պարանոցային ողերի վրա էր: Աճյունը պատկանում է 2–3 տարեկան երեխայի: Այն սարդիոնից պատրաստված թեքանիստ, երկկոն մեծ ուլունք-կնիք է (չափերը. երկ.՝ 1,33 սմ, լայն.՝ 1,2 սմ, անցքի տ/գ՝ 0,3 սմ): Նիստերից մեկը ձվաձև հարթեցված է, որի վրա փորագրված է ծաղիկ հիշեցնող պատկեր: Արմինե Գաբրիելյանը մեզ հուշեց, որ վերջինս սասանյան շրջանում տարածված կնիքներից է (աղ. 1, նկ. 9):

Տասնյակ թաղումներ ուղեկցվում էին տարբեր՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ոսկորներով: Առավել շատ հանդիպում էին հորթի ու ոչխարի ծնոտներ, որոնք հիմնականում դրված էին կմախքների կոնքոսկրերի վրա կամ դրանց շրջակայքում: Հանդիպում էին նաև խոշոր եղջերավորների (թերևս կովի) ատամներ, փոքր եղջերավորների մանր եղջյուրներ, կողոսկրեր: Որոշ կմախքների ստորին վերջույթների մոտ փաստվել են հատուկ դրված կավանդիների՝ օղակաձև նստուկով ամբողջական հատակամասեր: Նման երևույթ արձանագրվել է նաև

Չիչխանավանքում, որտեղ քրիստոնեական ծեսով կատարված տասնյակ թաղումների հետ հատուկ դրվել են կավանդյուններ՝ ամբողջական ճիթաճրագներ (Նալբանդյան, Ալեքսանյան 2011, 114):

Թաղումների առաջին ու երկրորդ շերտերի կմախքների շրջակայքից գտնվեցին տարբեր չափերի երկաթե կիսաքայքայված մեխեր: Դրանք հիմնականում գանգերի ու ստորին վերջույթների հատվածներում էին դասավորված:

Եզրակացություններ.

Աղքքի, շուրջ 400 քառ. մ տարածք զբաղեցնող, գերեզմանոցն անընդմեջ գործել է վաղ միջնադարից մինչև ուշ միջնադար ընկած ժամանակահատվածում: Տեղի սղության պատճառով մարդիկ օգտագործել են տեղանքի բնական ռելիեֆը, ժայռային ելքերը: Բացի այդ թաղումները միմյանց վրա ու շատ մոտ են կատարել: Այս հանգամանքը կարող է բացատրվել նաև նրանով, որ անգամ պետականությունից զուրկ, սակայն հայոց արքաների երբեմնի փառքն ու պետական խորհրդանշան հանդիսացող արքայական դամբարանի արժեքը գիտակցող համայնականները ձգտել են հնարավորինս մոտ թաղվել արքայական մատույններին: Բացի կենցաղային, սոցիալ-տնտեսական ու քաղաքական փոխհարաբերություններից, թաղումները թույլ են տալիս կոնկրետ ենթադրություններ անել հոգևոր-ծիսական, մասնավորապես՝ թաղման ծեսի վերաբերյալ: Դրանք փաստում են, որ մինչև ուշ միջնադար Աղքքում պահպանվել են որոշ պատառիկներ հեթանոսական հարուստ ծիսակարգից:

Մետաղյա զարդերի վրա պահպանված գործվածքի հետքերը վկայում են, որ քննվող ժամանակահատվածում լայն կիրառություն է ունեցել պատանքը: Կմախքների շրջակայքից գտնված երկաթե կիսաքայքայված գամերը հիմք են ենթադրելու, որ արդեն ուշ միջնադարում որոշ անհատներ թաղվել են փայտե դագաղների մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐԵՆԱՑԻ 1991 – Խորենացի Մ., Պատմության Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբեղեանի և Ս. Յարութինեանի, Լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, Հայկական ՀՍՀ ԳԱ հրատարակչություն, 1991:

ԲԻԻԶԱՆԴԻ 1833 – Բիզանդ Փ., Պատմություն Հայոց, Վենետիկ–Ս. Ղազար, 1833:

ԴԱՎՐԻԺԵՑԻ 1988 – Դավրիժեցի Ա., Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթությունը Վարազ Առաքելյանի, Երևան, «ՄՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ», 1988:

ԿԱՐԱՊԵՏՑԱՆ 2013 – Կարապետյան Ս., Տեղերի վանքը, «Վարձք» հանդես, 10, Երևան, ՀՀՈՒ, 2013:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, ԱԼԵՔՍԱՆՅԱՆ 2011 – Նալբանդյան Ա., Ալեքսանյան Ս., Չիչխանավանք (2008–2010 թթ. պեղումների արդյունքները), Նախնական հաղորդում, Հուշարձան, Տարեգիրք, Է, Երևան, «ՀՈՒՇԱՐՁԱՆ», 2011, էջ 102–114:

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ 2015 – Նալբանդյան Ա., Ալեքսանյան Ս., Միջին դարերի, Չիչխանավանք, Երևան, «Գասպրինտ», 2015:

ՇԱԽԱՌՈՒՆԵԱՆՑ 2014 – Շախաբունեանց Յով., Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ գաւառացի Արարատայ, աշխատասիրությամբ Արմեն Տեր-Ստեփանյանի, Վաղարշապատ, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին», 2014:

ՄԻՄՈՆՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ 2017 – Սիմոնյան Հ., Սաֆարյան Մ., Քալանթարյան Ն., Աղցքի Հայոց արքաների դամբարան-հուշահամալիրի կառուցապատման սկզբունքներն ու փուլերը, – Հայաստանը և արևելա-քրիստոնեական քաղաքակրթությունը Բ, Միջազգային գիտաժողով, Եր., 7–8 դեկտեմբերի, 2017 թ., Ջեկուցումներ և զեկուցումների դրույթներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2017, էջ 241–248:

ՄԻՄՈՆՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ 2017–2018 – Սիմոնյան Հ., Սաֆարյան Մ., Սիմոնյան Տ., Քալանթարյան Ն., Աթոյանց Ե., Աղձքի արքայական դամբարանի պեղումների 2015–2017 թթ. արդյունքները, Հուշարձան, Տարեգիրք, հատոր ԺԲ–ԺԳ, Երևան, «ՀՈՒՇԱՐՁԱՆ», 2017–2018, 5–52:

ՄԻՄՈՆՅԱՆ 2017 – Սիմոնյան Հ., Հայոց արքաների առեղծվածը, Անդին, ամսագիր, հ.6, Երևան, «ԱՆԴԻՆ Ա», 2017, 6–13:

ՄԻՄՈՆՅԱՆ 2005 – Սիմոնյան Հ., Ինչո՞ւ և ուրքե՞ր են վերաթաղվել Աղցքի արքայական դամբարանում, Տիգրան Մեծ–Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2005, 57–66:

ՄԻՄՈՆՅԱՆ 2011 – Սիմոնյան Հ., Աղցքի արքայական դամբարանի հուշարձանախումբ (IV–XVII դդ.), Հուշարձան, Տարեգիրք, Է, Երևան, «ՀՈՒՇԱՐՁԱՆ», 2011, 5–46:

ՄԻՄՈՆՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ 2019 – Սիմոնյան Հ., Հարությունյան Ա., Սաֆարյան Մ., Քալանթարյան Ն., Ստեփանոս Աղցից վանականի նորահայտ տապանագիրը, Հուշարձան, Տարեգիրք, հատոր ԺԴ, Երևան, «ՀՈՒՇԱՐՁԱՆ», 2019, 9–25:

ՏՆՆԱՎԵՏՅԱՆ 2020 – Տննապետյան Պ., ԵՐԵՐՈՒՅՔ Քրիստոնեական Հայաստանի Նշանավոր Հնավայր, Երևան, «Սարգիս Խաչենց. Փրինսիփոն», 2020:

Meri Safaryan

Scientific reseaech center of the historical and cultural heritage
mersaf87@mail.ru

MEDIVAL BURIALS ON THE TERRITORY OF THE MEMORIAL COMPLEX ARMENIAN KINGS IN AGHTSK

Keywords: Royal mausoleum of Aghtsk, stone relic chest, early medieval inscribed tombs, cemetery, medieval burials, burial assets

As a result of excavations in the village of Aghtsk, not far from the tomb of the Armenian kings, a cemetery was discovered that operated from the early to late Middle Ages. The burial rite of these burials testifies to the fact that even after the adoption of Christianity, some details of the pagan burial rite continued to exist, but already in combination with Christian traditions. The tombstones of the early Middle Ages preserved in their original form have a unique ornament and epitaph.

Мэри Сафарян

Научно-исследовательский центр историко-культурного наследия
mersaf87@mail.ru

СРЕДНЕВЕКОВЫЕ ЗАХОРОНЕНИЯ НА ТЕРРИТОРИИ МЕМОРИАЛЬНОГО КОМПЛЕКСА АРМЯНСКИХ ЦАРЕЙ В АХЦКЕ

Ключевые слова: царская гробница в Ахцке, каменные сундуки-оссуарии, ранне-средневековые надгробные плиты с надписями, кладбища, средневековые захоронения, погребальный инвентарь

В результате раскопок в селе Ахцк, недалеко от гробницы армянских царей, было обнаружено кладбище, действовавшее с раннего до позднего средневековья. Погребальный обряд этих захоронений свидетельствует о том, что даже после принятия христианства некоторые детали языческого погребального обряда продолжали существовать, но уже в сочетании с христианскими традициями. Сохранившиеся в первозданном виде надгробия раннего средневековья имеют уникальный орнамент и эпитафию.